

կերպով զինքը (Առաքելը) նաևապետին յանձնարարեց, եւ այսպէս մեկնեցաւ:»

Տարակոյս չկայ ուրեմն որ Առաքել ճարպիկ մէկն է որ կրցեր է Անդլիոյ մէջ նիւթական անկարգութիւնն զանել եւ մինչեւ իսկ Անդլիոյ թագաւորին եւ Եորքի դուքսին ներկայանալ եւ անոնց հովանաւորութիւնը շահիլ: Մեզի հասած է Անդլիոյ Չարլզ Բ. թագաւորին նամակը Առաքելին տրուած, որուն կարեւոր մասերը հոս կը թարգմանեմ:

«Չարլզ, չնորհիւ Աստուծոյ թագաւոր Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Իրլանտայի, առ բարձր եւ անհղ իշխանը, տէր, սուլթան, Շահ Ապպաս Սան, թագաւոր Պարսից եւ Մարաց նաեւ Հայոց: Մեր եղբայր եւ շատ սիրելի բարեկամ, ողջոյն, ձեր բոլոր հարստութիւնը բարգաւաճի:»

«Ամենաբարձր եւ անհղ իշխան, եղբայր եւ սիրելի բարեկամ:»

«Ինչպէս որ Եւրոպայի քանի մը ինքնակալները դիտած են այս նամակները բերող մեծայարգ Հայաստանի Արքեպիսկոպոս Առաքելի մասին, անոր շատ մեծ խոհեմութեամբ եւ եղական եռանդով մեր քրիստոնէական կրօնքին համար կատարածին, եւ նեղութիւն կրած են (Եւրոպայի ինքնակալները) նամակներով շարժելու Ձեր Վեհափառ Բարձրութեան (զութը) ի նպատակ բարեպաշտ ճիգերուն (Առաքելի) իր եկեղեցւոյն Երեւանի քաղաքին մէջ ըստ իր արարողութեան կատարելու: Մենք, ձեռնպահ մնալ չցանկալով այսպիսի գովելի գործէ մը, եւ ոչ ալ անուշադիր մնալ հասարակաց կամքին, նաեւ հաւատարմով որ Մեր միջամտութիւնը Ձերդ Վեհափառ Բարձրութեան քով պիտի ունենայ ոչ փոքր ազդեցութիւն երախտագիտութեամբ պիտի ընդունինք Ձեր Վեհափառ Բարձրութեան շնորհատուութիւնը»

Նամակը կը խօսի նաեւ առեւտուրի մասին «որ մեր հպատակները կ'ընեն Ձեր Վեհափառ Բարձրութեան սահմաններուն մէջ»:

« եւ Մենք մեծ փափաքով պիտի ընկալենք ներկայացուած առիթները Ձեր Վեհափառ Բարձրութեան լաւ

կերպով արժանի ըլլալու: Վերջապէս, Ձեր Վեհափառ Բարձրութիւնը Մենք սրտանց Աստուծոյ խնամքին կը յանձնենք:»

«Տրուած Ուհայդհոյի Պալատին մէջ, Տրդ օր Օգոստոսի 1670:»

«Ձերդ Վեհափառ Բարձրութեան լաւ եղբայրը եւ բարեկամը»

Չարլզ Թ(աղաւոր): (*)

1670-էն վերջ Առաքել ո՞ւր գնաց կամ ի՞նչ ըրաւ առ այժմ յայտնի չէ: Ամէն պարագայի տակ զինքը Երեւան չենք գտներ:

1678 Օգոստոս 6-ին Պապական նւերակը Վենետիկէն կը գրէր Հաւատոյ Տարածման Ժողովին որ իրենց այցելած է Նախիջևանի Արքեպիսկոպոսը, այսինքն Առաքել, որ Կ. Պոլսէն եկած է Սրալաղոյի վրայով, եւ տեղեկացուցած է Նուիրակին Հայոց Պատրիարքին, այսինքն Կաթողիկոս Յակոբ Զուղայեցիին ակնկալուած ժամանումը Ռուսաստանի վրայով Հոռոմ, 25 եպիսկոպոսներու հետ Պապին առջեւ ծնրազրելու համար:

Ինքն իսկ Առաքել կը գրէր «Ի 12 Նոյեմբերի, 1678 ի Վենետիկ, նամակ մը ուղղեալ «Վսեմազունեղ տեսաք», այսինքն Հոռոմի Հաւատոյ Տարածման Ժողովին:

Ստորեւ այդ նամակը Հաւատոյ Տարածման Ժողովին Դիւանէն առնելով, առաջին անգամ ըլլալով կը հրատարակեմ:

«Ձերում սրբազունեղութ(ան) յայտ լիցի սակս հիքացելոյս որ այս վեցտասան ամիսք են որ ընդ պատրիարզին մերում ելեալք յաթոռոյն եւ մեծաւ ուխադրու(թեամ)բ բաժանեցաք ի միմեանց, ըստ յառաջին տրակին մերում անցանիլ կամելով ընդ մօսկով. ճանապարհ չեն տուեալ ընդ այն անցանել. եւ դարձ արարեալ ընդ կողմամբն թէդուուպոլիս գալ ընդ կասպիականաւ (իսկ վրան դըրչէն պոնտոսիւ), այլ թշնամիք ոմանք մասնեալ են իշխանին տեղւոյն իբր թէ ջաշուշու(ք)ի(ւն) երթա, եւ նա կամեցեալ է ընդ իշխանին զիւր բանն շինել եւ զառաջ եղեալ ճանապարհն ընթանալ. բայց ամենաչարին խարդախութի(ւ)ն

(*) Անդ էջ 414, Ծանօթ. 2: